

2011Թ. ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արարատի մարզում գործում են 112 հանրակրթական, այդ թվում 5 ավագ դպրոցներ: Մարզի հանրակրթական դպրոցներում 2011-2012 ուսումնական տարում 33257 աշակերտներով կոմպլեկտավորվել են 1688 դասարաններ:

Դպրոցներում աշխատում են 3438 մանկավարժներ:

Արտաշատ քաղաքի N1 և Նոր Խարբերդի N2 միջնակարգ դպրոցներում իրականացվում է ներառական կրթություն: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 36 երեխաներ ընդգրկված են այդ ուսումնական հաստատություններում: Պարբերաբար իրականացվում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հաշվառում:

Զգալի աշխատանք է կատարվել Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ: Մարզի բոլոր 112 դպրոցները ապահովված են ինտերնետ կապով: 96 դպրոցներ ընդգրկված են Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի համակարգում: Մարզի դպրոցներում կան 1775 համակարգչային սարքավորումներ, 1139 համակարգիչներ, 110 համակարգչային դասարաններ:

Արարատի մարզի Լուսաշողի միջնակարգ դպրոցում Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի /ԿՏԱԿ/ Շարժական ինտերնետային համակարգչային կայանը /ՇԻՀԿ/ 15-օրյա ռեժիմով իրականացրել է ուսուցիչների ու աշակերտների վերապատրաստում ինֆորմատիկա առարկայից:

Բոլոր դպրոցներն ունեն կահավորված ՆԶՊ դասասենյակներ իսկ 102-ը ունեն ուսումնական զենք և զինամթերք:

2011 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում նպատակային աշխատանք է տարվել աշակերտներին և ուսուցիչներին դասագրքերով, ուսումնական ձեռնարկներով և ծրագրերով ապահովելու ուղղությամբ:

Դպրոցներին բաշխվել են 72432 հատ նոր հրատարակված դասագրքեր և ուսուցչի ձեռնարկներ: Ծնողների կողմից կատարվել է պլանավորված 98 մլն. 700 հազար դրամի ներդրում: Սոցիալապես անապահով երեխաներին դասագրքերով ապահովելու նպատակով պետության կողմից դրամաշնորհի ձևով մարզի դպրոցներին տրամադրել է 10479,8 հազար դրամ, որը փոխանցվել է դասագրքերի շրջանառու հիմնադրամի դպրոցների բանկային ենթահաշիվներին:

ՀՀ ԿԳ նախարարության կողմից ստացվել և հանրակրթական դպրոցներին են բաշխվել I-IV դասարանների աշակերտների և ուսուցիչների համար նախատեսված 33900 հատ անվճար դասագիրք, ինչպես նաև տարբեր դասարանների 5500 հատ առարկայական պաստառներ և քարտեզներ, 2040 հատ ուսումնական օժանդակ

գրականություն և 7500 հատ ուսումնական և առարկայական ամսագրեր ու տեղեկագրեր:

Կատարված աշխատանքների արդյունքում մարզի հանրակրթական դպրոցները ապահովված են դասագրքերով և ուսումնամեթոդական գրականությամբ:

Հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին մարզի 68 անժամկետ աշխատանքային պայմանագրերով պաշտոնավարող տնօրեններից 65-ը, ղեկավարման իրավունքի հավաստագիր ստանալու նպատակով, մասնակցել են վերապատրաստման դասընթացների, որոնցից 58-ը, ստանալով ղեկավարման իրավունքի հավաստագիր, վերընտրվել են իրենց պաշտոններում:

Մարզի 105 դպրոցների 577 ուսուցիչներ մասնակցել են փաստաթղթային ատեստավորման և ատեստավորման հանձնաժողովի կողմից ստացել դրական եզրակացություն:

ՀՀ ԿԳ նախարարության կողմից անցկացվող տարվա «Լավագույն տնօրեն» մրցույթի մարզային փուլի հաղթող է ճանաչվել Նոր Խարբերդի N1 միջնակարգ դպրոցի տնօրեն Նելլի Մուրադյանը, որը մասնակցելով մրցույթի հանրապետական փուլին, ճանաչվել է «Ուսումնադաստիարակչական աշխատանքները լավագույնս կազմակերպելու համար» նոմինացիայի հաղթող:

Տարվա «Լավագույն ուսուցիչ» մրցույթի հանրապետական փուլում Արարատ քաղաքի N3 հիմնական դպրոցի դասվար Կարինե Նիկողոսյանը արժանացել է խրախուսանքի:

ՀՀ ԿԳ նախարարության և Հայ առաքելական եկեղեցու կողմից կազմակերպված «Լավագույն ուսուցիչ» մրցույթի հանրապետական փուլում Արգավանդի միջնակարգ դպրոցի հայոց պատմության ուսուցչուհի Ռուզաննա Հովհաննիսյանը, Արարատ քաղաքի N 1 հիմնական դպրոցի քիմիայի ուսուցչուհի Իդա Ոսկանյանը և Արարատ քաղաքի N 2 հիմնական դպրոցի դասվար Հասմիկ Անտոնյանը արժանացել են 2-րդ կարգի, իսկ Այգավանի միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Գրետա Հովհաննիսյանը և Բյուրավանի միջնակարգ դպրոցի հայոց եկեղեցու պատմության ուսուցչուհի Նվարդ Մելիքյանը՝ 3-րդ կարգի դիպլոմների:

Համաձայն «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի՝ մանկապարտեզները վերակազմավորվել են ՀՈԱԿ-ների, իսկ մանկավարժների աշխատավարձի չափը համապատասխանեցված է օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջին:

Մարզում գործող 92 նախադպրոցական ուսումնական հաստատություններում ընդգրկված են 5983 երեխաներ:

Մարզի նախադպրոցական հաստատություններին անվճար բաշխվել է ԿԳ նախարարության կողմից հաստատված վեց անուն ծրագրամեթոդական գրականություն: Գործածության մեջ է դրվել նախադպրոցական ուսումնական հաստատության սաների հրամանագիրքը և հաստատության շարժի մատյանը:

Վարչական հսկողություն իրականացնելու աշխատանքային ծրագրով ուսումնասիրվել է մարզի 10 համայնքների ղեկավարների գործունեությունը նախադպրոցական կրթության բնագավառում:

Մարզում ապահովվում են նախադպրոցական կրթության ոլորտի պետական քաղաքականության իրականացումը և նախադպրոցական կրթություն ստանալու պայմանները:

<<Այլընտրանքային ծառայություններ>> ծրագրով շարունակվում է թույլ շեղումներ ունեցող երեխաների հաշվառումը և ընդգրկումը Արտաշատ ք. N 4 և N 8 մանկապարտեզներում:

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ